ղը խեցոսկով գրուած։ Ոսկեգիր է նոյնպէս Զօնը կապոյտ մակերևութի վերայ, 9ք։ Մանրանկարներն ու լուսանցքի զարդերը արժանի ուշադրութեան։

Նկարուած է ա) յիշատակարանից 308 ա. միջին երկաթագիր., բնագիրը 9×15 սմ., մեր նկարը 7,9×13 սմ.։

բ) Խորանների մէջ Եւսեբիի թղթ. 2ա. փոքր երկաթագրով. բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ 10×11,8 սմ.։

76 Մատ. Ս. Էջմ. № 919/947 (Կար. 899), Ճառք Սեբերիանոսի, թուղթ, 27½×21,7 սմ., երկիջեան, իւրաքանչիւրը 25,2×7½ սմ.։ ԳԻՐ. Անցման բոլորգիր բնագիրը, իսկ մեր լուսանկարը ծեղագիր յիշատակարանից։ ԳՐԻՉԸ. Պետրոս գրիչ, որի եղբայրն է Սիմեոն։ ՍՏԱՑՈՂ. Հայր Ականց անապատի Թորոս և միաբանութիւն «հրամանաւ երիցս երանեալ հաւրն Թորոսոյ և այլ միակամ և միախորհուրդ եղբայրութե՛ն»։ ՏԵՂ. «ի գերահռչակ անապատս, որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ ս՛ը Ա՛ծածնիս և ս՛ը Առաքելոցս»։ ԺԱՄԱՆԱԿ. 1215 թ. փրկչ. (տես լուսանկարը, Տախտակ Խէ). «ի թագաւորութե՛ն հայոց Լեւոնի յաղթողի եւ բարեպաշտի եւ ի հայրապետութե՛ն Յովհաննիսի հայոց կաթողիկոսի»։

Նկարուած է յիշատակարանը, շեղագիր, բնագիրը 13,6×8,8 վերջին տողը, մեր լուսանկարը 14×8,3

77. 78. 125. Մատ. Ս. Էջմ. № 230/1519 (Կ. 223), Բաղնայրի աւետարանը. 299 թերթ, ընտիր մագաղաթ, 41,8×29,2 սմ.։ ԳԻՐԸ. Խոշոր երկաթագիր, երկիջեան, 29×7,8 սմ., առանց ներքին ծանօթութիւնների։ ԳՐԻՉ. Անյայտ։ ՍՏԱՑՈՂ. Իշխանաց իշխան պատրոն Խաւռաս և իւր կինը Խաթուն. «Զպատրոն Խաւռաս որդի Ամիր Սարգսի եւ զամուսին իւր զԽաթունն յիշեսջիք յաղաւթս, որ ստացան զաւետարանս Բաղնայրի Ա՛ծածնիս վասն յիշատակի իւրեանց սիրելի եւ անդրանիկ Սասնային, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի ք՛ս եւ սուգ մեծ եթող ծնաւղաց իւրոց, որք կարդայք յիշեսջիք ի ս՛ը յաղաւթս ձեր, աղաչեմք». 99ք.։ ԺԱՄԱՆԱԿ. Աւետարանի մէջ չկայ նշանակուած, բայց յիշատակարանների և արձանագրութիւնների հիման վերայ, ուրիշ տեղ ցոյց ենք տուել, որ գրուած պիտի լինի 1212—1223/9 տարիների մէջ (Անահիտ. 1911։ Մայիս—Յունիս։ եր. 102)։

Նկարուած է ա) 2ա. աւետարանից, մեծ երկաթագիր, 13×7,8, մեր նկարը 12,8×7,7, գրեթէ նոյն մեծութեամբ։

բ) Յիշատակարան, միջին երկաթագիր 297է. բնագիրը 11×15½, մեր նկարը 10,9×15,3, գրեթէ նոյն մեծութեամբ։

գ) Յիշատակարան բոլորգիր 297ա., բնագիրը 28½×17½ սմ., մեր նկարը 9×15½ սմ։ Սորա ժամանակը 1308 թ. փրկչական։

79. Մատ. Ս. Էջմ. № 2093/2101 (Կ. 2050) Բանք յԱռ որս Աստուածաբանի կամ Գիրք Առասպելաց. թուղթ, 17½×2½ սմ.։ ԳԻՐ. Արևելեան բոլորգիր, մի իջեան 13,8×8½ սմ.։ ԳՐԻՉ. Ստեփանոս Աղթամարցի. ծնողն է Յովհաննէս, «տ՛ը Սարգիս հաւրեղբայր»։ ՏԵՂ. «ի վանքս Խորանաշատ կոչեցեալ, ի նահանգիս Աղուանից, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ Ա՛ծածնիս»